



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, երկուշաբթի օրը, «Տօն Ծննդեան և մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Վաղ առավոտյան Մայր Տաճարում պաշտովում է առավոտյան հանդիսավոր ժամերգություն: Տաճարում հնչում են «Խորհուրդ մեծ և սքանչելի»-ն և Մենդյան տոնին նվիրված հոգեգմայլ շարականներ: Մայր Տաճարը ժպտում է պայծառ լույսերի անձրևի տակ: Տաճարը զարդարվել է տոնականորեն: Օրվա մեծ տոնի առթիվ, վաղ առավոտվանից Մայր Աթոռ է ժամանել ուխտավորների մի մեծ բազմություն: Դրսում կարծես դարձանային օր է, արև է և ջերմ:

Վեհափառ Հայրապետը, Վեհարանում զգեստավորված, ժամը 11-ին, խնկով ու աղոթքով, երգով ու շարականով, եկեղեցական, թափուրով և հայրապետական ամպհովանու տակ իջնում է Մայր Տաճար պատարագելու: Տրդատյան դռնից դեպի Մայր Տաճար տանող ճանապարհի երկու կողմերի վրա հավաքվել է ուխտավորների արտակարգ բազմություն, որը ջերմորեն և երկյուղածությամբ է դիմավորում Վեհափառ Հայրապետին և ծնկի եկած հացցում է նրա սուրբ օրհնությունը:

Մայր Տաճարի զանգերը հնչում են զվարթագին և տոնական:

Մայր Տաճարը լիքն է հավատավոր սպիտակների բազմությամբ:

Ժամը 11.30-ին սկսվում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագը: Պատարագին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Նղիշե, Տ. Մուշեղ և Տ. Մեսրոպ վարդապետները, արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը և սարկավագների ամբողջ խումբը:

Մայր Տաճարի երգչախումբը քառաձայն երգում է Եկմայլանի սուրբ պատարագը և բաժիրշա պր. Հ. Գևորգյանի ղեկավարությամբ:

Մայր Տաճարի աշակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ պրոֆ. դոկտ. Ա. Ղարիբյանը, պրոֆ. Ա. Առաքելյանը, դոցենտ Ա. Տիրացյանը, դասախոս Ա. Աղաջանյանը, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը, Մայր Աթոռի ճարտարապետները, հատուկ հյուրեր, ռադիոյի և մամուլի ներկայացուցիչներ: Դասերում ներկա են նաև ուխտավորներ Կալիֆոռնիայից և Ռումինիայից:

Հանդիսավոր, վեհ ու տապալուրիչ շարունակվում է սուրբ պատարագը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը խոստում է իր զեղեցիկ և բովանդակալից քարոզներից մեկը, որը լսվում է հոգեկան անսահման ուրախությամբ և սքեռիչ խանդավառությամբ:

«Խորհուրդ մեծ և սխալ է, իհարկե»:
 Որ յայսմ ամուր յայտնեցաւ:
 ԵԱՐԱԿԱՆ ՄԵՆԴԵԱՆ

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Շատ դարեր առաջ, հույսի, հսկումի սրբազան ժամին, աշխարհի մը մեջ սուրբ տեսիլներու, աստղ մը շողշողաց և յույսը երկնքի իջավ երկիր. և յույսին հետ իջավ երգ մը հրաշալի ու մեծախորհուրդ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ի՞նչ պայծառ լույս էր այդ և ի՞նչ դյուրիշ երգ՝ դարերու երազ, դարերու տենչանք:

Ահա կձենէր Արեգակն արդարութեան՝ Հիսուս, իբրև Որդի Մարդո, որպէսզի մարդիկ վերստին ծնին իբրև որդիք Աստուծո, արդար ու խաղաղ աշխարհի մը մեջ հոր:

Եվ դարեր շարունակ մարդիկ, սերունդներ անքիվ, անհամար ու շարան-շարան, եկան ու անցան մեր կյանքի հովիտներ, երկրպագելով Մանուկ Հիսուսին, հրեշտակներու երգը իրենց շրթներուն, փնտռելով լույս աշխարհը հոր, խաղաղ ու արդար:

Ամեն օր, ամեն ժամ մարդիկ կձենին հոր տեսիլներով ու կմեռնէին, ավաղ, մեղքերով բաղկած, վերստին ծնելու անմար տենչանքով, հավիտյան ծարավի արդարութեան լույսին և սիրո երգին: Մարդիկ կ'ալնէին, կ'ալնէին համառ դեպի լուսաբացը խաղաղութեան ու բարի հաճութեան: Այս եվրոպական սուրբ համբուն վրա շատերը կ'ոգոստէին անդարձ ու անհետ, ուրիշներ, արի և խիզախ, կման կանգուն, կ'բարձրանան Դողգորաններն ի վեր, դեպի պատարագ, դեպի հարություն...

Ով արդար է և հավատով լեցուն, և գիտե բանալ իր հոգիին համբան, ան միշտ կտեսնէ աստղը երկնքի, ան միշտ կ'լսէ երգը հրեշտակին, ան միշտ կ'հավատա մեծ ավետիսին, զի ա՛յդ իսկ է փառքը նշմարիտ մարդուն և վեհ իմաստը երկրային կյանքին: «Էնոնները պիտի կրնան շարժիլ, բլուրները պիտի կրնան խոհարհիլ, սակայն իմ ողորմութիւնը պիտի չնվազի և իմ խաղաղութեան ուսմար պիտի չսասանի երբեք», — կրտս մարդասերն Աստուծո (Եսայի, ՄԴ 10):

Այս հավատով և այս մեծ հույսով, ո՛վ ժողովուրդ հայոց, Փրկչի Իշման այս Ս. Տաճարէն ավետիս կուտանք՝ քեզ՝ «Քրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ», «Փա՛ռք հրաշափառ աստուածայայտնութեան քո, Տէր»: Փա՛ռք Արեգակին արդարութեան, փա՛ռք խաղաղութեան և սիրո Աստուծոյն:

Սիրելի՛ հուսացյալ գավակներ Հայաստանայց Ս. Եկեղեցւո, բող ձեր հոգնած ու

տկար հոգիները հոր ուժ և հոր լույս առնեն Ս. Մենդյան անշէշ լույսի շողին, բող ձեր սրտերը վերստին լեցվին սիրո և խաղաղութեան երգով, բող վերստին նորոգվի ձեր հայ հավատացյալի ուսմար եվրոպական, դեպի ճշմարիտ հավատք մեր, դեպի հայոց սուրբ հավատքի հավիտեական Տաճար Ս. Էջմիածինը մեր, գոր Ինքը Աստուծո պարգևեց Հայոց Աշխարհին՝ իբրև կյանքի և սիրո աղբյուր, իբրև միութեան և խաղաղութեան վեմ:

Աղոթքի այս փաղք ու սրտառու պանուն հավատանք՝ Աստուծո, հավատանք՝ Ահոր բարձունքներէն իջած «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» սրբազան պատգամին: Այս է իղձը հանուր մարդկութեան երեկ և այսօր, այս է հաւ իղձը՝ Մեր փոքրիկ հոտին, հայ ժողովուրդին, Հայոց Եկեղեցիին:

Մեր Մայր Հայրենիքէն ներս թե՛ Սփյուռն աշխարհի, սիրելի՛ գավակներ Մեր, ապրեցե՛ք խաղաղ, սիրով միաբան մեր Ս. Եկեղեցւո օրհնութեան ներքև, ապրեցե՛ք ձեր բարի, առաքիլի ու ազգաշեն գործերով:

Դոնե Եկեղեցւո կամարներուն տակ, հոգևոր կյանքի շինութեան համբուն, մեկ կողմ դրե՛ք ամեն կողմնակի նկատում կամ խմբակցական շան: Սիրով նվեցե՛ք հայու սիրտը ձեր և հաղթահարեցե՛ք քեզի ու ատելութեան դավադիր ոգին: Սուրբ Էջմիածնի լույս անուր ձեր սրտին մեջ առած, ի մի հավաքվեցե՛ք մեր Ս. Եկեղեցւո հովանիին ներքև ու արգիլեցե՛ք ամեն պառակտում, ամեն բաժանում, ամեն ցրվում: Հավատքի սիրո կրակով վառված, ձեր փաղք խոսով պարտադրեցե՛ք բոլորին խաղաղութեան և սիրո ոգին, միասնութեան և անբաժանելիութեան կանոնը ազգաշեն, Եկեղեցւո սահմաններէն ներս, ի սեր Աստուծո և ի սեր Ազգի, և ի սեր ձեր բոլորիդ հարազատ Մայր Ս. Էջմիածնի: Ս. Էջմիածին՝ Ս. Էջմիածին, «Արո՞ղ աստուածակերտ, սխալ է, իհարկե»:

Մեր Ազգին ու Եկեղեցիին ուժը, մեր Ազգին ու Եկեղեցիին շանը, Մեր Ազգին ու Եկեղեցիին ապագան՝ մեր միութեանն է, մեր ներքին սերը, մեր խաղաղութիւնը, մեր գործակցութիւնը Տիրոջ այգիին մեջ, Ս. Լուսավորչի Մայր Արարի փառով լուսաշող:

Այս եվրոպական իղձով, այս սուրբ մաղբանքներով և Ս. Մենդյան շնորհներով գնդուն, բանա՛նք դռները հոր ժամանակներու, շինե՛նք, ծաղկեցնե՛նք մեր Ս. Եկեղեցին, շինե՛նք, ծաղկեցնե՛նք ու միշտ պանծացնե՛նք Բրիտանիայի սյուն Ս. Էջմիածինը մեր:

Սիրելի՛ հավատացյալներ, անցնող տարին Մայր Աթոռիս համար եղավ իրավ որ բարի և շինարար տարի մը, տարի մը խաղաղ և բեղմնավոր գործունեության:

Առավել կազմակերպվեցավ ու ամրացավ հոգևոր կյանքը այստեղ և մեր ներքին քեմերուն մեջ, Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհուրդի վերին հսկողության ներքև: Մեր միաբանությունը իր երիտասարդ շարքերով և հետզհետեւ անող հոր ուժերով՝ մեր սիրտը կլեցնեւ անսահման ուրախությունով: Անոնք հավատավոր են, անոնք լուսամիտ են և նվիրված սպասավորներ Ս. Եկեղեցվույս ու հայրենասեր ծառաները հայ ժողովուրդին: Մեր ուրախությունն է նաև Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը, որ այժմ ունի 50 ուսանողներ 5 դասարաններու մեջ: Վերատեսուչն է բոլորեղ սիրված Հայկազուն սրբազան եղբայրը Մեր, իր շուրջ ունենալով պատվական պաշտոնակիցներ, հմուտ ու բարեխիղին:

Մեծ գոհունակություն է Մեզ համար, որ այս տարի մեր Հոգևոր Ճեմարանը իր դասախոսական կազմին մեջ ընդունեց հայտնի գիտնական պրոֆ. Կարո Կաֆադարյանը՝ իբրև դասախոս հայ մշակույթի պատմության, համալսարանի դասախոսներ Համո Հարությունյանը՝ պատմաբան, և Վարազ Առաքելյանը՝ գրաբարագետ:

Հոգեկան մեծ և անփոխարինելի մխրատության աղբյուր հանդիսացավ, քե՛ Մայր Աթոռին և քե՛ հավատացյալ ժողովուրդիս համար, 1957-ի ընթացքին կատարած Մեր հովվապետական այցելությունները մեր ներքին քեմերուն՝ Շիրակի, Ռոստով—Նոր—Խախիզանի, Վրաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև վերջերս՝ Արարատյան քեմին: Դժվար է խոսքերով նկարագրել ու բացատրել այն սուրբ հրեմանքի ալիքը, որ ամեն տեղ փոքորկեց մեր ժողովուրդի հոգին: Հավատքի ծարավով այրած՝ հայոց սրտերը լեցվեցան հանկարծ և հորդառատ հոսիլ սկսան սրբազան հույզեր ու արդար իղձեր: Եվ եղան հեղեղ, հեղեղ՝ հոգիներեն բխող անհատնում սիրո և պաշտամունքի, դեպի հայ հոգիի տանար: Սրբություն Սրբոց էջմիածինը: Ուրախութենե խենթեցած ձեռներ, հագար—հագարներ, երկինք ցույց տալով, հայ հավատքին փառքը կերգեին, Ս. էջմիածնի տեսիլով կախարդված:

Հարգանք և օրհնություն այս ժողովուրդին, հարգանք և օրհնություն անոր հավատքին, անոր իղձերուն, անոր գալիքին:

Մեր հովվապետական այս այցելությունները եղան նաև բարեղեպ առիթներ, որպեսզի Մենք հանդիպումներ ունենանք դրացի եղբայրական ժողովուրդներու կրոնապետներուն, ինչպես և դրացի հանրապետությանը

մեծարգո նախագահներուն հետ: Այս հանդիպումները և տեսակցությունները վերածվեցան մեր եկեղեցիներու և ժողովուրդներու միջև՝ անկեղծ բարեկամության և եղբայրական սիրո արտահայտություններու և հուսով ենք Մենք, որ մոտ ապագային մեջ, դրական կերպով պիտի լուծվին մեր եկեղեցական հարցերը, բարյացակամությամբ դրացի հանրապետությանը պետական իշխանություններու՝ ի մխրատություն հայ հավատացյալներուն:

Մայր Աթոռիս հարաբերությունները մեր արտաքին քեմերու հետ եղան բնականոն և արդյունավոր՝ հոգևոր կյանքի կազմակերպման և հառաչդիմության տեսակետեն ևս: Մեր սեպուռն և սրբազան պարտքը կնկատենք մեր հոգևոր կապերը պահպանել և ամրապնդել մեր նվիրապետական Աթոռներուն և մեր առաջնորդական վիճակներուն հետ: Համայն հայ հավատացյալ ժողովուրդը, առանց խտրության, հարազատ ժողովուրդն է Մայր Աթոռ Ս. էջմիածնի, երեկ և այսօր, միշտ և հավիտյան, անկախ և վեր ամեն ժողաբանական, բնկերային կամ այլ կարգի նկատումներեն:

Ս. էջմիածինը է՛ և կմնա՝ գուտ հոգևոր կյանքի կեդրոն, ազատ ու անկաշխանք իր սուրբ առաքելության նախապարհին վրա: Հրավեր ու հորդոր կկարդանք բոլորին, որ հեռու կենան Մայր Աթոռին և անոր սուրբ գործին ժողաբանական բնույթ վերագրել, փորձելով արդարացնել որոշ ժողաբանական դիրքավորում Ս. էջմիածնի հանդեպ: Մենք գործ չունինք և չենք ալ ուզեր ունենալ ժողաբանական—բնկերային վարդապետությանը հակամարտության մեջ, և կկամենանք նաև, որ մեր հոգևորականները և արտասահմանի մեր ազգային—եկեղեցական իշխանությունները մագաչափ անգամ չհեռանան իրենց գուտ հոգևոր կոչումեն և նպատակներեն: Հայր ամեն տեղ բող մնա հավատարիմ իր սուրբ հավատքին և հավատքի վեմ Ս. էջմիածնին, և ըլլա պարկեշտ ու շինարար և օրհնասեր ժողաբանցի իր բնակած երկրին: Հայ ժողովուրդը արտասահմանի մեջ է՛ և պետք է մնա եկեղեցի—ժողովուրդ, միայն ու միայն: Սփյուռքի մեջ, արտաքին եկեղեցվո չիք հայ ազգություն:

Յավ է Մեզ, որ անցնող տարվան ընթացքին լուծում մը չգտնվեցավ կիլիկյան Աթոռի ներքին տագնապին, հակառակ Մեր բազում ջանքերուն և շինարար առաջարկներուն: Ավելին. այս տագնապը իր հերձվածի պատակտիչ ոգին տարածեց նաև Միացյալ Նահանգաց Մեր քեմերեն ներս, առավել խորացնելով հին անշատուժ որոշ եկեղեցական համայնքներու:

Անբրիլիասի այդ ոտնձգությունը Մենք կնկատենք շեղյալ. և հուսով լավատես կսպասենք, որ խոսին հշմարիտ սրտեր հայոց և Մեր զավակները. ազատ արձակված խորք կապաններն կամ բյուր մտքերն, դառնան նակատաբաց դեպի իրենց հոգիներու խառան Ս. էջմիածինը, որ անհուն կարոտով և անխառն սիրով իր մայրական քեներ բացած՝ կսպասե արքուն:

1957 թվականը եղավ Մեզ համար շինարար տարի մը, նաև եյուրական իմաստով: Շարունակվեցան ծրագրված շինարարական մեր աշխատանքները և կենսագործվեցան ավելի քան 70 տոկոսով: Արդեն լրիվ կերպով մարմարապատված են Մայր Տաճարի դասերը, ատյանը և երկու արքիդները: Մասնակի վերանորոգումներ կատարված են Երեմիայի, Սինդոի և Հոփիսիմի բեակելի շենքերու, ինչպես նաև Երեմիայի երեք եկեղեցիներու վրա: Ամբողջապես վերանորոգված է Բջենի պատմական հուշարձան-եկեղեցին՝ Լոնդոնի բարեպաշտ հայ գաղութի նվերներով և զովելի աշխատանքովը ածուլածասեր տիկնանց հանձնախումբին:

Այս բոլորի համար ծախսված է ընդամենը 1 400 000 ուրլի, ընթացիկ բյուջեն են դուրս անշուշտ:

1958-ի համար նախատեսված են հետևյալ աշխատանքները.

ա) Շարունակել և վերջացնել Ս. էջմիածնի մեծ պարսպի կառուցումը, սրբատաշ տուֆ ֆարով, շուրջ 1 000 մետր երկարությամբ և 5 մետր բարձրությամբ:

բ) Կառուցել Մայր Տաճարի նոր Ավագ Սեղանը իտալական մարմարով, արվեստագետ-հարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծերով:

գ) Մարմարապատել հայկական մարմարով Ս. Սեղանի բեմը, աստիճանները և Տաճարի երկու խորանները:

դ) Վերակառուցել Մայր Տաճարի հարավային փլած գմբեթը:

ե) Հիմնապես վերանորոգել տպարանի շենքը, նոր վեհարանը և մեկ հարկով բարձրացնել Հոգևոր Ճեմարանի շենքը:

զ) Հյուսիսային մեծ մուտքին վրա կառուցել հատուկ աշտարակ մը, մոտ 20 մետր բարձրությամբ, որուն վրա պիտի զետեղվի երեքհարկանի աշտարակային մեծ ժամացույցը, գոր Մայր Աթոռ Բլեր ստացավ բուլղարահայ քեմի կողմից:

Մնացած ենք նաև ամբողջապես վերանորոգել ու բարեկարգել է դարու հարտարապետական գլուխ-գործոց Ս. Հոփիսիմի տաճարը և Օշականի ու Ս. Շողակարի եկեղեցիները, առատաձեռն նվիրատվությամբ արտասահմանի եկեղեցասեր ազգայիններու,

որոնց անունները սրբությամբ պիտի հիշվին միշտ մեր աղոթքներուն մեջ այստեղ: Եվ երբ Տերը կամենա, վերանորոգման աշխատանքներ կուգենք կատարել նաև Ս. Խոր Վիրապի, Ս. Գեղարդի և Դավառագյազի Ս. Խաչ վանքերուն վրա:

1958-ի շինարարական մեր աշխատանքներու արժեքը կհասնի ավելի քան չորս միլիոն ուրլի: Ապահով ենք, քե Մեր այս ծրագրերը պիտի կենսագործվին Դալուստ Կյուլպենկյան հիմնարկության հատկացումներով, համաձայն մեծանուն ազգային բարերարի կտակի տրամադրությամբ:

Մայր Աթոռի տարեկան ընթացիկ բյուջեն, որուն մեջ չեն մտնել շինարարական վերահիշյալ ծախսերը, կհասնի մոտ երկու և կես միլիոն ուրլի գումարի, որուն դեմ ունենք մոտ երկու միլիոն ուրլի եկամուտ Մայր Տաճարեն և մեր ներքին հինգ քեմերեն: Մնացած գումարը, շուրջ 600 000 ուրլի, Հոգևոր Ճեմարանի ծախսը, կսպասենք, որ հոգան մեր արտասահմանի քեմերը, քեմական հատկացումներով կամ անհատական նվիրատվություններով:

Ուշացավ սրբազան նկարչության աշխատանքի բացումը: Կատարված են սակայն՝ նախապատրաստությունները և մեր նկարիչներու շարքին վրա ավելնալով արտասահմանեն հայ նկարիչ մը, հուսով ենք, քե այս ամռան անոնք կսկսին առաջին փորձերը կատարել էջմիածին ֆաղափ Ս. Աստվածածին եկեղեցիին վրա, և ապա կնկարագործեն Օշականի սուրբ եկեղեցին: Մեր նկարիչներուն մեծապես օգտակար պիտի ըլլան, Մեր կարծիքով, վերջերս հայտնաբերված որմանկարները Տաքի և այլ վանքերու, որոնք հայկականության դրոշմը կկրեն, զանազանվելով քե՝ բյուզանդականեն, քե՝ պարսկականեն:

Սիրելի՛ ժողովուրդ, Մայր Աթոռի փառավոր օրերեն մեկը պիտի ըլլա այն օրը, երբ շարժիլ սկսին մեքենաները մեր նոր տպարանին, որուն պատվերը տրված է արդեն ամերիկահայ հավատացյալներու սրտարուփ նվիրատվություններով և զովելի նախաձեռնությամբ Ս. էջմիածնի տպարանի հանձնաժողովին ու աշխատանքովը մանավանդ անոր հավատավոր ու խանդավառ նախագահին: Այս տպարանը նոր ուժ և նոր թափ պիտի տա մեր ժողովուրդի հոգևոր շինության գործին և նոր համբա պիտի բանա միշտ հաղթող Քրիստոսի Ս. Ավետարանին:

Այսպես անա, աշխատանքի տարի մը իր վախճանին հասավ, և աշխատանքի նոր տարի մը իր սկիզբը կառնե, Ս. Մենդյան և Աստվածահայտնության շնորհներով զեղուն:

Ամեն աշխատանք բարի գործ մըն է և հաճախ Աստուծոյ։ Ամեն կառուցում ու ստեղծագործություն ամրապնդում մըն է՝ «խաղաղության և ի մարդիկ հաճության» երկնային պատգամին։

Շինարար աշխատանքի մեջ է նշմարիտ ու մնայուն հաղթանակը մարդուն և ժողովուրդներուն։

Մեր Ս. Եկեղեցին և ամբողջ հայ ժողովուրդը կուգեն խաղաղ ապրիլ, որպեսզի շինեն ու ստեղծագործեն մեր մեծ Հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղասեր ու մարդասեր ազգերու կողմին։

«Երևանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։

Մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի Մենդյան տոնին առիթով, կողջունենք զձեզ, սիրեցյալ հավատացյալներ մեր, մաղբելով բոլորիդ նոր տարի մը բարի, խաղաղ օրերով ու ձեր սուրբ իղձերու լիակատար կենսագործումով։

Ս. Մենդյան շնորհները բոլ առատապես իջնեն ձեր վրա, լույս տան ձեր համբուն, փայլ տան ձեր մտքին, և ձեր սրտերուն՝ սիրո շնորհություն և խաղաղության ոգի։

Միաձենալէ այս Ս. Սեղանեն, մեր հարազատ այս Մայր Աթոռն՝ սրտաբուխ օրհնություն հայրապետական ձեզ բոլորիդ, սիրելի՛ զավակներ Մեր, խաղաղությամբ, խաղաղությամբ։ Ամեն։

Վեհափառ Հայրապետի Ս. Մենդյան տոնի առթիվ խոսած այս դեղեցիկ քարոզը նույն դիշեր հաղորդվեց Երևանի ուղիով։

Հավարտ սուրբ պատարագի, մեծահանգե՛կ կատարվում է «Ջրօրհնէք»-ը, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։ Հավատացյալները մեծ ուրախությամբ շշերի մեջ տուն են տանում օրհնված ջուրը։ «Առէք ջուր ուրախութեան յաղբերացն փրկութեան» (Եսայի ԺԲ 3)։

Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափուրով առաջնորդվում է Վեհարանի Մաղկյա դահլիճը, ուր ընդունում է Ս. Մենդյան տոնի առթիվ պաշտոնական շնորհավորությունները Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և ժողովրդի։ Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին, շնորհավորում հայ ժողովրդի Ս. Մենդյան տոնը, բարեմաղթություններ անում Մայր Հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղության համար։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատան մեջ, տրվում է ճաշկերույթ Ս. Մենդյան տոնի առթիվ։

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, ճարտարապետներ Մ. Մազմանյանը, Ռաֆայել Իսրայելյանը, վարազդատ Հարությունյանը, ինժեներ Ա. Մատինյանը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնակալներ, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և ուսումնական Կալիֆոռնիայից ու Ռումինիայից։

Առաջարկվում են սրտագին բաժակներ Վեհափառ Հայրապետի, Հայրենի կառավարության և հայ ժողովրդի կենացը։

Հուզիչ և դեղեցիկ ճառերով Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում են գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արքայապետը, պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը, Կալիֆոռնիայից ուսումնական Մայր Հայրենիք եկած տիկին Շուշանիկ Իսահակյանը, Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը և ուրիշներ։

Ընդունելությունն անցավ ջերմ ու խանդավառ մթնոլորտում։

Ճաշկերույթը վերջացավ Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։

